ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2006-Ա « 16 » ապրիլի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԼԻՆԱ ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ Հ.177 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԷՎԵԼԻՆԱ ԲՈՐԻՍԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ, 39-րդ կետերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2026 թվականի ապրիլի 7-ի N 679 արձանագրությունը՝

1. Էվելինա Բորիսի Մանգասարյանին՝ 2026 թվականի ապրիլի 20-ից, 1 տարի փորձաշրջանով՝ նշանակել «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ.177 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի ապրիլի 20-ից մինչև 2031 թվականի ապրիլի 20-ը ներառյալ և ազատել նրան նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

2. «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ.177 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էվելինա Մանգասարյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել Երևանի «Ջոն Կիրակոսյանի անվան հ.20

հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Քրիստինե Դումանյանին:

3. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ